# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«12» սեպտեմբերի 2023 թվականի N 185-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՎԼՈՎԻ ՓՈՂՈՑԻ N 8/1 ՀԱՍՑԵԻ 42.73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 26/1 հասցեի 200.4 (երկու հարյուր ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Քնարիկ Գրիգորի Հովհաննիսյանին (1/2 մաս) և Արթուր Արամի Հովհաննիսյանին (1/2 մաս) (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07022022-08-0003 վկայական):

Քաղաքացի Արթուր Արամի Հովհաննիսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18082023-08-0023 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պավլովի փողոցի N 8/1 հասցեի 42.73 (քառասուներկու ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Արամի Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի մարտի 11-ին N 4497 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիներ Քնարիկ Գրիգորի Հովհաննիսյանին (1/2 մաս) և Արթուր Արամի Հովհաննիսյանին (1/2 մաս) ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 26/1 հասցեի 200.4 (երկու հարյուր ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տանը հարակից, Պավլովի փողոցի N 8/1 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 42.73 (քառասուներկու ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 292017 (երկու հարյուր իննսուներկու հազար տասնյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արթուր Արամի Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

| Կողմ (17) | Դեմ (0) | Ձեռնպահ (4) |
| --- | --- | --- |
| Վ.Սամսոնյան | | Վ.Հակոբյան |
| Գ.Մելիքյան | | Ս.Ադամյան |
| Լ.Սանոյան | | Կ.Մալխասյան |
| Մ.Սահակյան | | Կ.Ասատրյան |
| Ն.Պողոսյան | | |
| Գ.Պապիկյան | | |
| Ս.Հովհաննիսյան | | |
| Հ.Ասատրյան | | |
| Ս.Խուբեսարյան | | |
| Ք.Հարությունյան | | |
| Հ.Նիկողոսյան | | |
| Ն.Ղազարյան | | |
| Ծ.Արամյան | | |
| Ջ.Միքայելյան | | |
| Լ.Մուրադյան | | |
| Հ.Ստեփանյան | | |
| Հ.Մարգարյան | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿԱՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ք.Գյումրի
«12» սեպտեմբերի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

# ՈՐՈՇՈՒՄ
## ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամսաթիվ՝ 31/10/2023
Փաստաթղթի N՝ Կ-31102023-08-0046
գաղտնաբառ՝ **R1DHC8P3BU2L**

*Հասցեատեր՝*

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄԻ

*Անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը*

**Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Պավլովի փողոց 8/1 հողամաս, Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Վ. Սարգսյան փողոց 26/11 բնակելի տուն**

*Ձեր **N 26/10/2023-3-1310** դիմումի հիման վրա վերը նշված անշարժ գույքի նկատմամբ հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի **28-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով** սահմանված հիմքերով, քանի որ՝*

**ներկայացված փաստաթղթերում /որոշում, պայմանագիր/ սխալ է նշված մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Վ. Սարգսյան փողոց 26/11 բնակելի տուն հասցեն:**

*Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր Կարեն Խաչատրյան **

**Սույն որոշումը հաստատված է էլեկտրոնային եղանակով այն ընդունած պաշտոնատար անձի կողմից:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 7 փետրվարի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՔՆԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ (1/2), ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄԻ (1/2)

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Վ. Սարգսյան փողոց 26/11 բնակելի տուն

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 23/12/2005թ. թիվ 2368 որոշում, հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ վավերացված 12/06/2006թ. սեղանամատյան թիվ 4747, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր՝ հաստատված 28/06/2006թ. սեղանամատյան թիվ 5382, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ տրված 24/05/2021թ. գրանցամատյան թիվ 2749, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 02/09/2021թ. թիվ 2139-Ա և 31/01/2022թ. թիվ 165-Ա որոշումներ

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 08-001-0339-0069
Մակերեսի չափը (հա)՝ 0.02004
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 07022022-08-0003, գաղտնաբառ՝ GALDFMAAWTBT**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*